ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԹԻՎ 0001/04/07/2025-VOIP

ք. Էջմիածին «09» հուլիս 2025թ.

«ԱՐՓԻՆԵՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, (ՀՎՀՀ՝ 04719683, հասցեն՝ ՀՀ, Արմավիրի մարզ, քաղաք Էջմիածին, Բաղրամյան 22/2, Բանկ՝ Ինեկոբանկ ՓԲԸ, հ/հ՝ 2050622092881001, ՀՎՀՀ՝ 04719683) ի դեմս՝ գլխավոր տնօրեն Կարեն Մուրադյանի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Օպերատոր, մի կողմից և **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊՀ (ՀՎՀՀ՝ 04447253, հասցե՝ ՀՀ, մարզ Արմավիր, Համայնք Արմավիր, քաղաք ք.Արմավիր, փողոց Աբովյան, շենք 71, Բանկ՝ ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն, հ/հ՝ 04447253) ի դեմս գլխավոր քարտուղար Արամ Հովհաննիսյանի,** ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Պատվիրատու, մյուս կողմից, (այսուհետ՝ առանձին հիշատակման դեպքում՝ Կողմ, միասին՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան.

1.1. Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն
պայմանագրի 1.2 նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել դրանց համար:
1.2 Սույն պայմանագրի իմաստով Ծառայություն է համարվում՝ պատվիրատուի կողմից տրամադրված հասցեում կառուցել զանգերի կենտրոն (call center): Պատվիրատուին տրամադրվում է հեռախոսահամար, որի հիման վրա կառուցվում է զանգերի կենտրոն, որի հետագա սպասարկումն իրականացնում է Օպերատորը:

2. Ծառայության գինը և վճարման կարգը.

2.1 Սույն Պայմանագրի 1.2 կետով սահմանված ծառայությունների համար Պատվիրատուն Օպերատորին վճարում է համաձայն սույն պայմանագրին կից և դրա անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ի, իսկ տրամադրված հեռախոսահամարով կատարված զանգերի րոպեավճարներր համար համաձայն Հավելված 2-ի:
Օպերատորն իրավունք ունի փոփոխել մատուցվող Ծառայությունների արժեքը, փոփոխությունից 30 օր առաջ գրավոր տեղեկացնելով Պատվիրատուին: Փոփոխությունները համարվում են ուժի մեջ մտած, դրանց վերաբերյալ կազմված համաձայնագրերը և/կամ հավելվածները երկկողմանի հաստատելուց հետո:
2.2 Մատուցված Ծառայությունների վճարման համար հիմք է հանդիսանում Օպերատորի կողմից ներկայացված հարկային հաշիվը, որը Պատվիրատուին տրվում է ամսական վարձերի համար հաշվետու ամսվա ավարտից ոչ ուշ քան հաջորդող ամսվա մինչև 10-ը:

2.3 Պատվիրատուը ամսական ծառայությունների վարձերը վճարում է հարկային հաշիվը ստանալուց հետո, մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 15-ը ներառյալ:

3. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները.

3.1 Օպերատորն իրավունք ունի պահանջել Պատվիրատուից ժամանակին և սահմանված կարգով կատարել վճարումները:
3.2. Օպերատորը պարտավոր է՝
3.2.1. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով.
3.2.2 Ծառայությունները մատուցել ամբողջ ծավալով՝ ողջամիտ ժամկետներում (առավելագույնը 10 օր):
3.3 Պատվիրատուն իրավունք ունի՝
3.3.1ցանկացած ժամանակ ստուգել Օպերատորի Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու
նրա գործունեությանը.
3.4 Պատվիրատուն պարտավոր է

3.4.1 կատարել սույն պայմանագրի 2.1 կետում նշված գումարի վճարումը սույն պայմանագրի 2.3 կետում նշված ժամկետում:

4.Կողմերի պատասխանատվությունը

4.1. Պայմանագրի գործողության ցանկացած դադարեցումը Կողմերին չի ազատում միմյանց հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունների կատարումից:

4.2. Կողմերը պատասխանատվություն են կրում միայն ուղղակի, ապացուցված վնասների համար (իրական վնաս), որոնք հասցվել են մյուս Կողմին՝ պայմանագրի կատարման ընթացքում: Անուղղակի կորուստներն ու վնասները, չստացված եկամուտները, ինչպես նաև բաց թողնված օգուտը փոխհատուցման ենթակա չեն:

4.3. սույն պայմանագրի 2.1 կետում նշված գումարը սույն պայմանագրի 2.3 կետով սահմանված ժամկետում չվճարելու դեպքում Պատվիրատուն Օպերատորին վճարում է տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար Ծառայությունների ամսական արժեքի գումարի 0,01 (զրո ամբողջ զրո մեկ)տոկոսի չափով:

4.4. տույժերի վճարումը կողմերին չի ազատում իրենց վրա դրված պարտավորությունները կատարելուց կամ խախտումները վերացնելուց:

4.5. Օպերատորը պատասխանատվոյթուն չի կրում վճարումներն ընդունող միջնորդի կողմից սահմանված կանոնների համաձայն որևէ լրացուցիչ միջնորդավճարի գանձման համար:

5. Ֆորս մաժոր.

5. Կողմերը պատասխանատվություն չեն կրում Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման անհնարինության դեպքերում, եթե այն առաջացել է այնպիսի հանգամանքներից (երկրաշարժ, ջրհեղեղ, պատերազմ, զինված հարձակում, ռազմական և արտակարգ իրավիճակ հայտարարելը՝ ֆորս մաժոր): Եթե ֆորս մաժորային հանգամանքը տևում է երկու ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի լուծել սույն Պայմանագիրը այդ մասին գրավոր տեղեկացնելով մյուս կողմին:

6. Պայմանագրի գործողության ժամկետը.

6.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է 1 (մեկ) տարի ժամկետով: Եթե Պայմանագրի ժամկետի լրանալուց մեկ ամիս առաջ Կողմերից որևէ մեկը գրավոր առաջարկություն չի ներկայացնում այն դադարեցնելու մասին, ապա այն համարվում է երկարաձգված 1 (մեկ) տարի ժամկետով: Երկարաձգումների քանակը սահմանափակված չէ:

6.2 Պատվիրատուն կարող է նախաձեռնություն հանդես բերել Պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելու համար, այդ մասին գրավոր հայտնելով Օպերատորին Պայմանագրի դադարեցումից առնվազն 25 /քսանհինգ/ աշխատանքային օր առաջ:

6.3 Օպերատորը իրավունք ունի լուծել Պայմանագիրը, եթե Պատվիրատուն կխախտի սույն Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունը (ները) և այն (խախտումը) չի վերացնի Օպերատորի գրավոր նամակը ստանալու օրվանից մեկ ամսվա ընթացքում:

7. Այլ դրույթներ.

7.1 Պայմանագրում լրացումներ, փոփոխություններ կարող են կատարվել երկկողմանի գրավոր համաձայնությամբ Հավելվածի և/կամ Համաձայնագրերի ձևով, որը կհանդիսանա սույն Պայմանագրի անբաժանելի մասը:

7.2 Պայմանագրի շուրջ ծագած վեճերը կարգավորվում են բանակցությունների միջոցով, համաձայնության չգալու դեպքում դրանք լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.3 Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

8. Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊՀ
ՀՎՀՀ՝ 04447253
Բանկ՝ «ՀՀ ֆինանսների
նախարարության գործառնական
վարչություն» ՓԲԸ
հ/հ՝ 900331131053
Հասցե՝ ՀՀ, մարզ Արմավիր,
Համայնք Արմավիր, քաղաք
ք.Արմավիր, փողոց Աբովյան, շենք 71
Հեռ.՝ +374 93 183110
Գլխավոր քարտուղար՝
Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

_____
(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ
Հեռ.՝ 060 888 888
e-mail: info@arpinet.am
Տնօրեն՝ Կ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

_____
(ստորագրություն) Կ.Տ.

Տպագրված 2օր.
Օր.1՝ անձ. գործի մեջ
Օր.2՝ հասցեատիրոջը
Կատարող՝ Մ.Գևորգյան
Տպագրող՝ Մ.Գևորգյան
Հեռ.՝ 060888888(717)
09.07.2025

«Արփինետ» ՍՊԸ և **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊՀ**-ի միչև 09.07.2025թ կնքված թիվ **0001/04/07/2025-VOIP** պայմանագրին կից և դրա անբաժանելի մասը կազմող

ՀԱՎԵԼՎԱԾ 1

N	Տրամադրվող ծառայության տեսակները	Նկարագիր/ քանակ	Արժեք	Ամսական վարձ	միանվագ Վճար
1.	Հեռախոսահամար	060901010	0	0	0
2.	Սերվերի կառուցում		38000	0	38000
3.	Ձայնային մենյուի տրամադրում	----------	3000	3000	0
4.	ներքին հեռախոսահամար	32	500	16000	0
5.	ամսկան բաժանորդագրության տարի	----------	2400	2400	0
6.	Սերվերի սպասարկման ծառայություն	----------	20500	20500	0
7.	Ձայնագրություն	Առավելագույնը 3 ամիս	3000	3000	0
8.	ընդհանուր վճարը			44900	38000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊՀ
Հեռ. +37493183110
e-mail: a.hakobyan77@mail.ru
Գլխավոր քարտուղար՝
Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ
Հեռ.՝ 060 888 888
e-mail: info@arpinet.am
Տնօրեն՝ Կ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

(ստորագրություն) Կ.Տ.

«Արփինետ» ՍՊԸ և **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊՀ**-ի միչև 09.07.2025թ. կնքված թիվ **0001/04/07/2025-VOIP** պայմանագրին կից և դրա անբաժանելի մասը կազմող

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Զանգերի ուղղությունը	1 րոպեի արժեքը/ ՀՀ Դրամ
ՀՀ ֆիքսված ցանցեր	4.5
ՀՀ բջջային ցանցեր	17
Զանգեր ցանցի ներսում	0

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊՀ
Հեռ. +37493183110
e-mail: a.hakobyan77@mail.ru
Գլխավոր քարտուղար՝
Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ
Հեռ.՝ 060 888 888
e-mail: info@arpinet.am
Տնօրեն՝ Կ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

(ստորագրություն) Կ.Տ.

«ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ
22, Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Բաղրամյան 22/2
Հեռ: +374 (60) 888 888
Էլ. Փոստ: info@arpinet.am
Վեբ կայք: www.arpinet.am

«ARPINET» LLC
22/2 Baghramyan St., 1108 Ejmiatsin, Armavir region, Republic of Armenia (RA)
Tel: +374 (60) 888 888
E-mail: info@arpinet.am
Web: www.arpinet.am

Կողմերի միջև «25» 04. 2025թ. կնքված Թիվ 00008/25/04/2025 պայմանագրին կից և դրա անբաժանելի մասը կազմող
Վերջնահաշվարկ 41

ք. Վաղարշապատ «01» հուլիս 2025թ.

N	Անվանում	Հատ Մետր	Գին	Ընդամենը	Այլ նշումներ, մեկնաբանություններ
1	D-Link 3200-18 switch	3	45000	135000	Յուրաքանչյուրից 18 կետ վերցնելու հնարավորությամբ խելացի Switch
2	MiKrotik RB750GR3 Board	1	59000	59000	Հեռախոսների ապարատները կարգավորող սարքավորում
3	Մալուխ UTP	1400	250	350000	Հեռախոսների ներքին ցանցի համար օգտագործվող մալուխ
4	Աշխատանք	32	8000	256000	Կատարված աշխատանքների համար
5	Կարգավորում	32	3500	112000	Կարգավորումների և կարգաբերումների համար վճարվելիք գումար
6	Ընդամենը			**912000**	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊՀ
Հասցե՝ ՀՀ, մարզ Արմավիր, ք.Արմավիր,
Աբովյան, շենք 71
ՀՎՀՀ՝ 04447253
Բանկ՝ Ֆինանսների նախարարություն
հ/հ՝ 900331131053
Հեռ.՝ +374 93 183110
e-mail: a.hakobyan77@mail.ru
Գլխավոր քարտուղար՝
Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ
Հեռ.՝ (060) 888-888,
Հասցե՝ ՀՀ, Արմավիրի մարզ,
ք. Էջմիածին, Բաղրամյան 22/2
ՀՎՀՀ՝ 04719683
Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ,
հ/հ՝ 2050622092881001
e-mail: info@arpinet.am,
Տնօրեն՝ Գ.ՄՈՎՍԻՍՅԱՆ

(ստորագրություն) Կ.Տ.

«ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ
22, Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Բաղրամյան 22/2
Հեռ՝ +374 (60) 888 888
Էլ. Փոստ՝ info@arpinet.am
Վեբ կայք՝ www.arpinet.am

«ARPINET» LLC
22/2 Baghramyan St., 1108 Ejmiatsin, Armavir region, Republic of Armenia (RA)
Tel: +374 (60) 888 888
E-mail: info@arpinet.am
Web: www.arpinet.am

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ

ք. Էջմիածին «01» 07.2025թ.

«ԱՐՓԻՆԵՏ» ՍՊ ընկերությունը՝ այսուհետ Կատարող մի կողմից, և **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊՀ** այսուհետ Պատվիրատու, մյուս կողմից, հիմք ընդունելով, 25.04.2025թ. կնքված թիվ 00008/25/04/2025 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), դրան կից և անբաժանելի մասը կազմող փաստաթղթերը (Նախահաշվարկ 41, Վերջնահաշվարկ 41՝ որոնցում ամրագրված է ծառայությունների մանրամասն նկարագրությունը, արժեքը և այլ տեղեկություններ) կազմեցին սույն ակտը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը իրականացրել է Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Պատվեր-Հայտերով ու դրանց հիման վրա կազմված և հաստատված նախահաշարկներով Պատվիրատուի կողմից պատվիրված ծառայություն(ներ)ը պատշաճ որակի: Սույնով Կատարողը հանձնեց, Պատվիրատուն ընդունեց կողմերի միջև կնքված Պայմանագրով կից վերջնահաշվարկով ամրագրված ժամկետում և պայմաններով կատարված աշխատանքները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊՀ
Հասցե՝ ՀՀ, մարզ Արմավիր,
ք.Արմավիր, Աբովյան, շենք 71
ՀՎՀՀ՝ 04447253
Բանկ՝ Ֆինանսների նախարարություն
հ/հ՝ 900331131053
Հեռ.՝ +374 93 183110
e-mail: a.hakobyan77@mail.ru
Գլխավոր քարտուղար՝
Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ
Հեռ.՝ (060) 888-888,
Հասցե՝ ՀՀ, Արմավիրի մարզ,
ք. Էջմիածին, Բաղրամյան 22/2
ՀՎՀՀ՝ 04719683
Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ,
հ/հ՝ 2050622092881001
e-mail: info@arpinet.am,
Տնօրեն՝ Կ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

(ստորագրություն) Կ.Տ.